

ՈՌՈԳՈՒՄ

Գյուղատնտեսական մշակաբույսերի աճի ու զարգացման հիմնական պայմաններն են՝ **լույսը, ջերմությունը, օդը, ջուրը** և **սննդանյութերը**:

Լույսը բույսին անհրաժեշտ է նրա ֆոտոսինթեզի համար: Լույսի տևողությունը և ինտենսիվությունը ազդում են բույսի աճի ու զարգացման վրա: Լույսի անբավարար քանակությունից բույսերը դեղնում են, և աճը նվազում է, քանի որ նրա տերևների մեջ պակասում են քլորոֆիլի հատիկները:

Ջերմությունը բույսի համար անհրաժեշտ է սերմերի ծլման, արմատային ցանցի տարածման և վերերկրյա մասի աճման համար: Հողի ցածր ջերմաստիճանը վատացնում է կամ դանդաղեցնում բույսի արմատների բջիջների կողմից ջրի կլանման պրոցեսը: Բացասաբար է ազդում նաև բարձր ջերմաստիճանը, որի դեպքում բույսերը կատարում են չափից ավելի տրանսպիրացիա (բույսից ջրի գոլորշիացում), իրենց բջիջների ջերմությունը կարգավորելու համար:

Օդային ռեժիմ. հողի օդային ռեժիմը ջրային և սննդային ռեժիմի հետ հողի բերրիության կարևոր գործոնն է: Հողի օդը կարող է լինել ազատ վիճակում (դատարկություններում, որոնք լցված չեն ջրով), ափսոսքով (հողի մանր անցքերում) և հողի լուծույթում: Բույսերի համար առավել կարևոր է ազատ վիճակում գտնվող օդը, որի պարունակությունը կախված է հողի ծակոտկենությունից և խոնավություն: Գյուղատնտեսական մշակաբույսերի աճի համար հողում ջրի և օդի ամենանպաստավոր հարաբերությունն է, երբ հողի ծակոտիների 60 %-ը լցված է ջրով, իսկ 40 %-ը՝ օդով: Հողում բարենպաստ օդային ռեժիմի ստեղծումը բարձր բերքի նախադրյալներից մեկն է:

Ոռոգումը բույսի կյանքի համար ամենակարևորագույն գործոններից մեկն է, որի ճշգրիտ կազմակերպման միջոցով կարգավորվում է հողի օդային, ջերմային և սննդային ռեժիմները, ստեղծվում է պայմաններ հողի բերրիության բարձրացման և շրջակա միջավայրի ազրո-էկոլոգիական հավասարակշռության պահպանման համար: Ոռոգման անհրաժեշտությունը և կիրառումը պայմանավորված է մշակաբույսերի ջրասպառումից, այսինքն ջրի նկատմամբ բույսերի պահանջից, որի մեծությունը կախված է ջերմաստիճանից, օդի հարաբերական խոնավությունից, լույսից, հողի բերրիությունից, ջրաֆիզիկական հատկություններից և մշակաբույսի տեսակից: Սննդանյութերը հողից բույսի բջիջների մեջ մուտք գործել կարող են միայն ջրի մեջ լուծված վիճակում: Ջրային այդպիսի լուծույթ կստացվի այն դեպքում, երբ հողում բավարար քանակությամբ ջուր կա: Սահմանված է, որ բույսերի միջով անցնող 1000 մաս ջրի միայն 1,5 -2 մասն է



յուրացվում սնման պրոցեսում, իսկ մնացած մասը ծախսվում է տրանսպիրացիայի վրա կամ գոլորշիացվում է բույսերի կողմից: Տրանսպիրացիան բույսերի կյանքի համար անհրաժեշտ պրոցես է, որի ժամանակ ջուրը հոսում է արմատներից դեպի գոլորշիացնող տերևները: Այս պրոցեսը իջեցնում է բույսի ջերմաստիճանը և եթե չլինեք տրանսպիրացիան, տեղի չեր ունենա ջրի անդհատ հոսք դեպի տերևները, ուստի կղաղաբեր սննդանյութերի շարժումը բույսերի միջով: Բույսերը իրենց կյանքի որոշ շրջանում ավելի շատ ջրի պահանջ են զգում: Եթե այդ շրջանում ջուրը չի բավարարում, բույսերի բերքը խիստ կերպով ընկնում է: Բույսերի ջրի ապահովման գլխավոր աղբյուրներն են մթնոլորտային տեղումները և արհեստական ոռոգումը: Մթնոլորտային տեղումներից ձյունը սովորաբար գտնվում է հողի սառած շերտի վրա, երբ զարնանը ձյունը սկսվում է հալվել, հալոցքի ջուրը հողի մեջ թափանցել չի կարողանում և առաջացնում է մակերեսային հոսք: Չյան ջուրը օգտագործվում է 50% -ով: Բացի դրանից, անձրևների ձևով տեղումները տարվա բոլոր ամիսներին հավասարաչափ չեն բաշխվում, իսկ բույսերի բուռն աճի և օրգանական նյութերի կուտակման շրջանում անձրևները սովորաբար շատ քիչ են, այդ ժամանակը համընկնում է զարնանացան խոտաբույսերի և հացաբույսերի ցողունակալումից մինչև հասկակալումը: Պարզ է, որ այդ շրջանում ջրի պակասը վտանգավոր է, որովհետև բույսերը մնում են կարճ, հատիկները լավ չեն կազմակերպվում, և ստացվում է քիչ բերք, ուստի առաջանում է բույսերի արհեստական ոռոգման անհրաժեշտություն:

Գոյություն ունի ոռոգման երեք եղանակ՝ մակերեսային, անձրևացման և ենթահողային: Մեծամասամբ կիրառվում է մակերեսային ոռոգումը, որի ժամանակ ջուրը բաշխվում է դաշտում հողի մակերեսի վրա: *Մակերեսային ջրման* տարածված եղանակն է ակոսային ջրումը: *Ակոսներով* ջրում են հիմնականում բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերը: Ակոսներով ջրելիս հողը չի խտանում, չի կեղևակալում և չի ճաքճքում, ջուրը ներծծվում է հողի մեջ ակոսի հատակից: Ակոսները պետք է պատրաստվեն ոչ մեծ խորությամբ, քանի որ խոր ակոսները հետագայում բերքահավաքի ժամանակ խանգարում են կոմբայնի աշխատանքներին: Հացահատիկային մշակաբույսերը և խոտաբույսերը ընդունված է ջրել **կորիներով**: Կորիներով ջրում են մինչև 0.07 թեքություն ունեցող տարածությունները: Կորիները ունեն դաշտում դասավորման երեք սխեմա՝ երկայնական, լայնական և շեղ: Երկայնական կորիների դեպքում ջրման ուղղությունը համընկնում է կորու ուղղության հետ, լայնական կորիների դեպքում ջրման ուղղությունը լինում է ուղղահայաց կորիների ուղղությանը, շեղ կորիները պատրաստվում են տեղանքի հորիզոնականների նկատմամբ, որոշ անկյան տակ:

ՌԶԳ ՀԿ «Անասնակերի արտադրության արդյունավետ փորձի խթանումը թիրախային համայնքներում» ենթաձրագրում ընդգրկված մի շարք ֆերմերներ, որոնք մշակել են գարի առվույտի ենթացանքով, արդեն պատրաստել են կորիներ, անհրաժեշտության դեպքում դաշտը ոռոգելու համար: